

# Երկրաշարժից անվտանգ պաշտպանությունը խանութներում



## Երբ խանութ եք մտնում, նայեք ձեր շուրջը

- Ի՞նչ կա ձեր գլխավերևում և ձեր շուրջը, որը կարող է շարժվել կամ ընկնել երկրաշարժի ժամանակ:
- Նախապես մտածեք այդ մասին՝ ընկնող առարկաներից ձեզ պաշտպանելու համար:

**Մարդիկ հաճախ երկրաշարժերի ժամանակ վնասվածքներ են ստանում, եթե փորձում են քայլել շուրջը և հարվածներ են ստանում ընկնող առարկաներից, կամ քայլում են ապակիների կամ այլ սուր առարկաների վրայով:**

## Եթե ցնցում եք զգում կամ ահազանգ եք ստանում երկրաշարժի մասին,

**Տեղում ԿՈՒՑԵՔ** գետնին, նախքան ցնցումները ձեր ընկնելու պատճառ կդառնան:

**ՃԱՃԿՎԵՔ**՝ ձեր թևերով պաշտպանելով ձեր գլուխն ու պարանոցը և փորձեք ձեր մարմինը դարձնել ավելի փոքր թիրախ ընկնող կամ թռչող առարկաների համար:

- Գնումների զամբյուղը որոշակի պաշտպանություն կապահովի:
- Հագուստի դարակների ներսում պատսպարվելը որոշակի պաշտպանություն կապահովի:
- Բարձր դարակներով միջանցքում (ինչպես պահեստներում) ներքևի դարակում պատսպարվելը որոշակի պաշտպանություն կապահովի:

**ԲՈՒՎԵՔ** որևէ ամուր առարկայից:



Կալիֆորնիայում ապրող անձանց խորհուրդ է տրվում ներբեռնել MyShake ծրագիրը՝ բջջային հեռախոսով երկրաշարժի մասին ահազանգեր ստանալու համար:

Այլ իրավիճակների վերաբերյալ ուղեցույցերի համար, ներառյալ՝ դրսում, թատրոնում գտնվելիս կամ անվասայլակ օգտագործելիս, այցելեք՝ [EarthquakeCountry.org/step5](https://www.EarthquakeCountry.org/step5):